ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«09» 12 2020թ.
№ 24/1-5/242212

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
հեռ.՝ (+374 11) 518 304
էլ.փոստ՝ erebouni@yerevan.an

«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Մ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Վարդանանց փող. 10 շ. բն.37

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
### Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.08.2020 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–20/150-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներ(այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած՝ Երևանի Էրեբունի վարչական շրջանին թվով 3 հատ հատակմաքրիչ իր քամող դույլով 149 լիտր հեղուկ օճառ և 800 հատ զուգարանի թուղթ մատակարարման պարտավորությունները՝ 41400 (քառասունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժեքով ընդհանրապես չեն կատարվել, կատարողը չի մատակարարել վերոնշյալ ապրանքները: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր վերոնշյալ ապրանքները մատակարարեր մինչև 30.09.2020 թվականը ներառյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 2.1.7 կետի համաձայն գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայամանգիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայամանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյամբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԲԼԱՄՄՈ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 02.10.2020թ. 24/1-10/19615 գրության պահանջը, հատնաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատ.՝ Մ. Մելքոնյան
011 518342